

## 4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

### 4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2004թ. հունվար-մարտին հանրապետության տարածքում տեղաբաշխված կուլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 19960 զբոսաշրջիկ (ՀՀ ռեզիդենտներ), որը 2003թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 11.0%-ով:

#### Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2003 թ. հունվար-մարտ	2004 թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը (2004թ. հունվար-մարտ,%)
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>3</sup></b>	<b>17988</b>	<b>19960</b>	<b>100</b>
<i>որոնցից ըստ նպատակի՝</i>			
գործնական	6846	7426	37.2
հանգստի և ժամանցի	6471	7351	36.8
բուժման	16	360	1.8
այլ	4655	4823	24.2

<sup>3</sup> Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: